

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա  
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

24 մայիսի 2019թ.

**Ներկա էին՝** գիտխորհրդի 24 անդամներից 19-ը (ներկայաթերթիկը կցված է):  
**Նախագահ՝** ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան  
**Գիտական քարտուղար՝** ք.գ.թ. Ա. Դադայան

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի երկրորդ տարվա առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Հայկ Ռազմիկի Պետրոսյանի ատեստավորման հարցը: Ձեկուցող՝ Ա. Սաղյան
2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակազնոգիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Սաթենիկ Ղուկասի Պետրոսյանի կողմից ներկայացված «Ջրային գոլորշիներով թորման եղանակով անջատվող նյութերի քիմիոնաբանական բնութագրեր» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը: Ձեկուցող՝ Ա. Սաղյան
3. Ընթացիկ հարցեր:
  - 3.1. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի եվ իտալիայի հանրապետության ազգային հետազոտական խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակազնոգիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ. Հ. Սիմոնյանի կողմից ներկայացված «Ոչ սպիտակուցային ալֆա-ամինաթթուների և պեպտիդների վրա հիմնված համակարգերի սինթեզ և կենսաբանական գնահատում» վերնագրով հայտի երաշխավորման հարցը: Ձեկուցող՝ Ա. Սաղյան
  - 3.2. Ֆարմացիայի ինստիտուտի առկա ուսուցման 1-ին կուրսի կուրսատորի հաշվետվության քննարկում և հաստատում:

**ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի երկրորդ տարվա առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Հայկ Ռազմիկի Պետրոսյանի ատեստավորման հարցը:

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սաղյանը, ով հաղորդեց, որ հարցը քննարկվել է Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնում, և հաշվի առնելով ասպիրանտի կողմից կատարված ծավալուն աշխատանքները, ամբիոնը երաշխավորել է ատեստավորման:

Ա. Սաղյանը նշեց, որ ուսուցման երկրորդ տարում ասպիրանտը հանձնել է կրթական բաղադրիչի «Պարտադիր դասընթացներ և քննություններ» բաժնից քննություն՝ «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» առարկայից, տպագրել է 3 հոդված և միջազգային գիտաժողովի 1 թեզիս:

Հ. Պետրոսյանը բանավոր զեկույցով հանդես է եկել նաև ՀՀ ԳԱԱ 90 և ԵՊՀ 100-ամյակներին նվիրված «Ֆարմացիայի արդի վիճակը և զարգացման հեռանկարները» վերնագրով I միջազգային գիտաժողովին:

**Ելույթ ունեցավ՝** Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, ով փաստեց, որ ամբիոնում կայացած նիստում ասպիրանտ Հ. Պետրոսյանը մանրամասն ներկայացրել է ասպիրանտուրայում ուսուցման երկրորդ տարում կատարած ծավալուն գիտահետազոտական աշխատանքները, ստացվել են հետաքրքրիչ արդյունքներ: Նա նշեց, որ Հ. Պետրոսյանը ցուցաբերել է նաև հասարակական ակտիվություն, մասնակցել է տեղական տարբեր դրամաշնորհների մրցույթներին և ներկայումս մասնակցում է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի 18T-2I168 ծածկագրով դրամաշնորհի կատարման աշխատանքներին: Իրեն դրսևորել է որպես պատասխանատու և աշխատասեր անձնավորություն:

**Որոշեցին՝** (միաձայն) հաշվի առնելով Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել ասպիրանտ Հայկ Ռազմիկի Պետրոսյանին:

2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Սաթենիկ Ղուկասի Պետրոսյանի կողմից ներկայացված «Զրային գոլորշիներով թորման եղանակով անջատվող նյութերի քիմիոնաբանական բնութագրեր» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը: **Ձեկուցող՝ Ա. Սաղյան**

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանին, ով նշեց, որ Ս.Ղ. Պետրոսյանի կողմից ներկայացված աշխատանքը ենթարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ՝ արտաքին գրախոսման: Արտաքին գրախոսը՝ ԵՊՀ Դեղագիտության ֆակուլտետի քիմիայի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիդա Արշակի Սահակյանը, կարևորել է ուսումնական ձեռնարկի անհրաժեշտությունը «Թունաբանական քիմիա» առարկայի դասավանդման

համար և ձեռնարկում առկա թերությունները շտկելուց հետո՝ այն երաշխավորել տպագրության (կարծիքը կցվում է):

**Որոշեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

Հաշվի առնելով վերոհիշյալ աշխատանքի անհրաժեշտությունն ուսումնական գործընթացի համար, այն թույլատրել տպագրության (100 օրինակ տպաքանակով), համալսարանի միջոցների հաշվին:

### **3. Ընթացիկ հարցեր:**

**3.1.** ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի եվ իտալիայի հանրապետության ազգային հետազոտական խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ. Հ. Սիմոնյանի կողմից ներկայացված «Ոչ սպիտակուցային ալֆա-ամինաթթուների և պեպտիդների վրա հիմնված համակարգերի սինթեզ և կենսաբանական գնահատում» վերնագրով հայտի երաշխավորման հարցը: Ջեկուցող՝ Ա. Սաղյան

**Լսեցին՝** Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանին, ով տեղեկացրեց, որ հայ-իտալական համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար ինստիտուտի Ֆարմբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ. Հ. Սիմոնյանի կողմից ներկայացվել է հայտ, որն անհրաժեշտ է երաշխավորել մրցույթին մասնակցելու համար: Նա ողջունեց Հ. Սիմոնյանի նախաձեռնությունը հայ-իտալական գիտահետազոտական համագործակցության շրջանակներն ընդլայնելու ուղղությամբ և առաջարկեց հայտի ղեկավարին համառոտ ներկայացնել թեմայի շրջանակներում նախատեսվող գիտահետազոտական աշխատանքները: Հ. Սիմոնյանը համառոտ ներկայացրեց հայտի բովանդակությունը և պատասխանեցին հարցերին: Գիտխորհրդի նախագահ Ա. Սաղյանն առաջարկեց ներկայացված հայտը երաշխավորել մրցույթին մասնակցելու համար, քանի որ այն նախապես քննարկվել է ամբիոնի նիստում և գնահատվել է դրական:

**Որոշեցին՝** (միաձայն) ներկայացված հայտը երաշխավորել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

**3.2.** Ֆարմացիայի ինստիտուտի առկա ուսուցման 1-ին կուրսի կուրատորի հաշվետվության քննարկում և հաստատում:

**Լսեցին՝** ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա ուսուցման 1-ին կուրսի կուրատոր Ֆարմբիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ.

Սաթենիկ Ղուկասի Պետրոսյանի հաշվետվությունը՝ 2018-2019 ուս. տարում կատարված աշխատանքների մասին: Ս. Պետրոսյանը նշեց, որ հաշվետու ուսումնական տարում ուսանողները ծանոթացրել են ուսումնական կիսամյակների կառուցվածքներին, քննությունների անցկացման կարգերին, գնահատման ձևերին: Կազմակերպվել է շրջայց Ֆարմացիայի ինստիտուտի մասնագիտական լաբորատորիաներով, ուսանողների հետ իրականացվել է կուրսի և խմբերի ավագների ընտրություն, քննարկել են վարձավճարների հետ կապված հարցեր, ինչպես նաև կազմակերպվել է ուսանողների բժշկական զննման անցկացումը:

**Որոշեցին՝** (միաձայն) դրական գնահատել հաշվետու տարում Ս. Պետրոսյանի կողմից կատարված աշխատանքները և հաստատել հաշվետվությունը:

Գիտական խորհրդի նախագահ՝  
տնօրենի պաշտոնակատար,  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան